

Այս արտակարգ ծառին ելեկտրական գործիքներն օրուան ամէն ժամերուն մի և նոյն չէ, մեծագոյն ուժը միջօրեին է, և նուազագոյնը կէս գիշերուան, և եթէ օդը խոնաւ և անձրեային ըլլայ՝ բոլորովին կ'անյայտանայ: Թռչունները, առանց բացատուրեան ամէնքն ալ, կը հեռանան անկից:

Լոնտոնայի ընդարձակութիւնը. — Երբ ո՛ր և է տեղ մը մարդկանց խնդողմ ըլլայ, ընդհանրապէս կը համարուի իւրաքանչիւր ճառակուսի մեղր տեղոյ մէջ 4 հոգի, այս սկզբունքի վրայ յենլով հաշուազէտ մը՝ զտած է թէ ամբողջ աշխարհի մարդկութիւնը կրնայ բովանդակուիլ Լոնտոնայի կոմսութեան շրջանակին մէջ:

Ամբողջ Քաննատայի ժողովուրդը Hyde Parkի 400 արտավար հողուն վրայ կրնան իրենց տեղ գտնել, և Battersee Parkի մէջ ամբողջ Աւստրալիոյ բնակչութիւնն կրնայ հիւրընկալուիլ: Եթէ Գէորգ Թագաւորը ուզէր բացօդեայ հանդէս մը սարքել նոր Ջելանտաքոյ՝ բաւական էր Buckingham Odaceի 50 արտավար հողը: Բովանդակ Գաղղիա կրնայ փորագործուիլ ի Richmond Park, և եթէ քիչ մը աւելի խնամքով կարգադրուի՝ ամբողջ Ռուսիոյ բնակչութիւնն կրնայ գետեղուիլ Epping Forestի մէջ:

Հ. Հ.

Ամերիկահայ թերթերէն հետեւեալները երկու ամիսէ ի վեր չէինք ստացած. վերջերս մեզի հասան ամբողջութեամբ.

ԱԶԳ. — 789 Washington St. BOSTON.

ԱՍՊԱՒԷՋ. — P. O. Box 865 FRESNO Cal.

ԵՐԻՏԱՍԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ. — 606 Blue Isl. Av. CHICAGO Ill.

ՀԱՅՐԵՆԻՔ. — 7 Bennet St. BOSTON.

ՊԱՆԱԿ. — 814 Old Sout Building. BOSTON.
Կանոնաւորապէս ստացած ենք.

ԿԱԶԱԿ. — 115 E. 24th St. NEW YORK.

ՆՈՐ ԿԵԱՆՔ. — Ֆրէնչոյի Թերթը Օպոստոսէ ի վեր չենք ստացած:

THE NEW ARMENIA. — 949 Broadway. NOW YORK.



ԳՐԱԽՕՍԱԿԱՆՔ



LA MUSIQUE EN ARMÉNIE. — Բարիշու չու Հայ Ազգային Պատուիրակութիւնը՝ ազնիւ հոգատարութեամբ և շրջահայեաց արթնամտութեամբ մը, ամէն հայ և Եւրոպական կեդրոններու՝ ուր Հայ հոգի մը կ'արծարծի, կը զրկէ իր ծախքերով ո՛ր և է հրատարակութիւն մը՝ որ Հայ Եկեանքի և բարքի մը վերաբերի: Այսպէս զրկած է մեզի Histoire Moderne des Arméniens, որուն մասին Ապրիլի թիւին մէջ խօսեցանք, և այս անգամ զարձակ զբոյժ է Միսրանութեան Կրտաւարանին Frederic Macler հայագէտին նոր հրատարակութիւնը Հայկական երաժշտութեան վրայ: Ասիկա հմուտ և ճոխ բանախօսութիւն մ'է՝ զոր հեղինակը՝ կատարած է Պրանսացիներու հոծ բազմութեան մ'առջև:

Կը սկսի հայկական երգերու ծագումէն, կը բացատրէ անոնց զանազան տեսակները, սիրերգ, պարերգ, հայն, մէջ կը բերէ Վաղանքի, Սաթենիկի, Արտաշէսի բոլոր պատառիկները. կը խօսի շարականաց վրայ... և վերջապէս կը հասնի արդի հայ ժողովրդական երաժշտութիւնը բացատրելու համար: Հոս աւելի կը ճոխանայ՝ աշուղներու պատառիկներ մէջ բերելով, ոսմկին երգերը բացատրելով, և որ աւելին է՝ նոյն իսկ երգած են Օր. Պապայեան, Օր. Փավանոյ կայն:

Գրքին վերջը կը գտնուին չորս նմանատիպ պատկերներ՝ Բարիշու Հայ ձեռագրաց Շարականէ մ'արտատպուած: Գրքին բովանդակութիւնը 40 էջէ կը բաղկանայ, տպուած է ի Librairie E. Mourry, 62, Rue des Écoles, 62 PARIS, 1917.

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՍԱՐԱԳԻ. — Սա Բարիշու «Հայ Երաժշտասիրաց Խումբ»ին զվարար երկերէն մին է, և ուժայն դաշնակաւորուած Պ. Լ. Զիւրն.

կիրեանէ և մեզ զրկուած Պ. Լ. Համար-
ձուսեանէ: Ասոնց կանոնագիրն հետեւեալն
է՝ զոր կ'արտասպակենք.

ԱՌՌԱՐԵԱՅ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱՅ ԽՈՒՄԲԻՆ

Բարեգէ Հայ Երաժշտասիրաց Խումբը, կազմուած
զազուկի երիտասարդներէն, նպատակ ունի հայ ե-
րաժշտութիւնը ներկայացնել իր բարձրութեան մէջ,
մասնակցելով հայկական հանդէսներու և ի մասնաւորի
հայ եկեղեցւոյ արարողութեանց:

Խումբին կրեան մասնակցիլ ամէն տնոց, որոնք եր-
գելու ընդունակութիւն ունին:

Խումբը ունի վարչական մարմին մը, բնաւորաւ ընդ-
հանուր ժողովէն:

Վարչական մարմինը կը բաղկանայ ներկայացուցիչէ
մը և զանապաղէ մը: Խումբին ծախքերը կը հոգացուին
համակիրներէ անոնցման նուէրներով:

Ընդհանուր ժողովը կը զուարթի ամէն 3 ամիս, ուր
զանապաղէ կը ներկայացնէ իր հաշիւները:

Ընդհանուր ժողովը իրեն կը վերապահէ վարչական
մարմինին պաշտօնավարութեան շրջանը:

Խումբի կազմավորածման պարագային զոյգերը կը
յանձնուին Հոգեւոր Հովիբին:

Ինչպէս որ կը տեսնուի՝ այս երիտա-
սարդներուն բուն փափաքն է զարգացը-

նել մեր եկեղեցական երաշտութիւնը, ցուցը-
նել օտարներուն որ Հայ տարրը ամէն
մասնահնդիկ մէջ զարգանալու ատակ է,
թէ գեղարուեստի այս մասնահնդիկն մէջն
ալ կրնայ զերազանցել, վերջապէս թէ
ունի նա նուր ճաշակ մը:

Անշուշտ սրտայոյզ տեսարան մը պի-
տի ըլլայ՝ ներկայ գտնուիլ Բարեգու Ազ-
գային Վսեմ Տաճարին մէջ այս երաժըշ-
տութեան, որ միտքը կը բարձրացնէ,
հոգին կ'ազնուացնէ... Յաջողութիւններ
Հայ Երաժշտասիրաց Խումբին:

« ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱ-
ՅՈՑ » . — Բարեգարնակ բրոֆ. Կ. Յ.
Բասմաջեանի այս փոքրիկ երկն ալ ստա-
տած ենք հեղինակէն, որ 8 էջերէ կը
բաղկանայ, հոս կը գտնուին Հայոց Պատ-
մութեան Սկիզբէն Ռինչ (885 Ք. Ա.-433
Յ.Ք.) Արշակունեաց Թագաւորութեան ան-
կումը՝ մեր Ազգին վրայ իշխողաց բոլոր
անունները՝ իրենց թրականներով, Սա-
առձեռն տնտրակիկը՝ մեծ դիւրութիւն
կ'ընծայէ անոնց, որ կ'ուզեն գիտնալ
հայ ժամանակագրութեան յառաջնադա-
ցումը:

ARMENIA

Այս իտալական ամսօրեայ թերթը՝ այս անգամ միացուած է Մարտ-Ապրիլ թիւերը, աւե-
լի ճոխ պարունակութեամբ, բազմաթիւ պատկերներով, և ընտիր յօդուածներու շարքով: Սա-
միակ թերթն է Խտալիոյ մէջ՝ որ յամառ յարատեւութեամբ, ժիւր ջանքերով կը ճգնի՝ բարձր նպա-
տակի մը համար, ծանօթացնելու իտալական ազգին՝ Հայուն մարտիրոսութիւնը, ներկայապէս
կրածները, ցուցնել որ նա զուր տեղ կը չարչարուի, ըմբռնել տալ որ այս ազգը մեծ հանճարներ
ստեղծեք է. և ասոր իբրև ապացոյց՝ կը բովանդակէ շատ մը թարգմանութիւններ մեր մե-
ծանուն հեղինակներուն, ինքնագրութիւններ և այլն: Այս թերթը այլ ևս մեծ ճիւղաւորումներ ա-
ռած է Խտալիոյ մէջ և դուրսը. նախարարներէ և երեսփոխաններէ սկսեալ բաժանորդներ ունի:
Ամենուն կը յանձնարարենք ամենաշնչին զոհողութեամբ մը բաժանորդագրուելու այս թերթին:
Տարեկան գինն է Ֆր. 5 արտասահմանի համար, իսկ Խտալիոյ մէջ Ֆր. 2,50: Դիմիլ

Spett. Periodico « Armenia »

Corso Regina Margherita 73,

TORINO (Italia)